ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

N ԼՆ//13193-2026

16-02, 01-06-2026

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՊԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ ԱՐՄԱՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆԻՆ**

Հարգելի՛ պարոն Ադիլխանյան

ՀՀ փոխվարչապետի սույն թվականի ապրիլի 3-ի № 03.1/03.71/11802-2026 հանձնարարականի կապակցությամբ հայտնում եմ, որ առողջության համընդհանուր ապահովագրության ներդրումն անկախությունից ի վեր հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում իրականացված խոշորագույն համակարգային բարեփոխումներից մեկը, որի արդյունավետ գործարկումը պահանջում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների խոշոր համախմբում և անցնցում ապահովման նպատակով նաև պետության կողմից որոշակի մոտեցումների որդեգրում, որոնք թույլ են տալիս համակարգի աշխատանքներն իրականացնել հնարավոր առավել արդյունավետ գործիքակազմերի կիրառմամբ:

Այդ իմաստով, տեղեկացնում եմ, որ «Առողջության համընդհանուր ապահովագրության մասին» օրենքով վարձու աշխատողների համար սահմանվել են ապահովագրավճարների հաշվարկման և վճարման ընդհանուր մոտեցումներ, որոնք, այդուհանդերձ, առանձին թիրախային խմբերի համար ունեն որոշակի առանձնահատկություններ՝ ներդրման առաջին տարվա համար: Մասնավորապես, հաշվի առնելով, որ մինչև 500 000 ՀՀ դրամ վարձրատրություն ստացող վարձու աշխատողների (բացառությամբ սոցիալական փաթեթի շահառուների) համար ընթացիկ տարում ապահովագրավճարների վճարումը լրացուցիչ բեռ կարող էր դառնալ, օրենքի համաձայն որոշվեց նրանց ապահովագրավճարների ամսական դրույքաչափի 6000 ՀՀ դրամը հատուցել պետական բյուջեի միջոցների հաշվին, իսկ սոցիալական փաթեթի շահառուների համար որդեգրվել է այլ մոտեցում՝ հաշվի առնելով, որ նրանց համար օրենսդրությամբ ապահովվել է մեկ այլ՝ ապահովագրավճարների՝ ինքնուրույն վճարման ենթակա 6000 ՀՀ դրամը, սոցիալական փաթեթի համար հատկացված միջոցներից վճարելու հնարավորություն:

Այսպիսով, պետությունն, իր հնարավորությունների սահմաններում, սահմանել է իրավակարգավորումներ, որոնք սոցիալական արդարության սկզբունքների հիման

վրա հնարավորինս համաչափ թույլ են տալիս մեղմել վարձու աշխատողների տարբեր խմբերի՝ ապահովագրավճարների վճարմամբ ծագող ֆինանսական բեռը:

Միևնույն ժամանակ, տեղեկացնում եմ, որ Առողջության համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրմանը զուգահեռ ՀՀ առողջապահության նախարարությունը շարունակելու է արձանագրված դժգոհություններ, խնդիրների, վերհանման և դրանց լուծմանն ուղղված՝ իր իրավասությունների շրջանակում ներառված աշխատանքների իրականացումը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԼԵՆԱ ՆԱՆՈՒՇՅԱՆ**

X _____

Կատարող՝
Առողջության համընդհանուր
ապահովագրության հիմնադրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 03.1/03.71/17961-2026

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Ա. ԱՍԱՏՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ասատրյան,

Ի պատասխան ս/թ ապրիլի 1-ին ՀՀ Վարչապետին հասցեագրված Ձեր գրության, հայտնում ենք հետևյալը.

Կառավարության առաջնահերթությունների ուղղությամբ կատարողականի գնահատման և բարձր կատարողականի հիմքով խրախուսման գործընթացն իրականացվում է Կառավարության՝ 2025 թվականի նոյեմբերի 27-ի N 1712-Լ որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված պիլոտային կարգին համապատասխան: Որոշման հիմնավորումը, այդ թվում՝ Ձեր կողմից ներկայացված հարցերի պարզաբանմամբ, հասանելի է https://www.e-gov.am/sessions/archive/2025/11/27/ հղմամբ:

Տեղեկացնենք նաև, որ խրախուսման համակարգի պիլոտավորման արդյունքների վերլուծությունը հիմք է դառնալու հանրային ծառայողների վարձատրության համակարգի բարեփոխման շրջանակը վերջնականացնելու և վարձատրության գործող համակարգը 2026թ. ընթացքում համապատասխան օրենսդրական փոփոխություններով վերանայելու համար:

Վերոնշյալ օրենսդրական փաթեթի մշակման գործընթացի մասնակցայնությունն ապահովելու նպատակով նախատեսվում է դրա վերաբերյալ իրականացնել հանրային լայն քննարկում՝ ինչպես «e-draft»՝ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի, այնպես էլ մասնագիտացված կազմակերպությունների հետ աշխատանքային քննարկումների միջոցով, որոնց շրջանակներում ակնկալում ենք նաև Ձեր մասնակցությունը:

Միաժամանակ, կից ներկայացնում ենք Առողջապահության նախարարության պատասխան գրությունը՝ դիմումով Ձեր կողմից ապահովագրավճարի վերաբերյալ բարձրացված հարցի կապակցությամբ:

Հարգանքով՝

X _____ **ԱՐՄԱՆ ԱԴԻԼԽԱՆՅԱՆ**

Կատարող՝ Հովհաննես Սաֆարյան
Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գրասենյակի մասնագետ
Հեռ. 010515966
Էլ փոստ՝ hovhannes.safaryan@gov.am